Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

10.02.2025թ. **ք.Երևան**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի բարձրագույն մարմինը՝ ընդհանուր ժողովը,

Հաշվի առնելով այն, որ «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 12.06.2024 թվականին ընդունված թիվ ՀՕ-285-Ն օրենքի (ուժի մեջ է մտել 2025թ. հունվարի 1-ից, **այսուհետ՝ Օրենք**) համաձայն՝ փաստաբանական ծառայություններ մատուցող՝ շրջանառության հարկ վճարողներին օրենքի ուժով պարտադրվել է անցնել հարկման ընդհանուր համակարգ (պետք է վճարեն ԱԱՀ և շահութահարկ), ինչպես նաև փաստաբանական գրասենյակների կողմից անվճար հիմունքներով մատուցվող ծառայությունները ենթարկվելու են հարկման,

Նկատի ունենալով այն, որ փաստաբանական ծառայություններ մատուցող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարման ենթակա հարկը փաստացի բարձրացել է 6-8 անգամ (5 տոկոս շրջանառության հարկի փոխարեն հարկվում են ավելացված արժեքի հարկով (ԱԱՀ՝ դրույքաչափը 20 տոկոս) և շահութահարկով (դրույքաչափը՝ 18-23 տոկոս),

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և Փաստաբանների պալատի կանոնադրության 7.2 կետով.

1. ***<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է, որ</u>*** Օրենքի կիրառությունը՝

- Հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով հռչակված՝ Հայաստանի Հանրապետության իրավական և սոցիալական պետություն հանդիսանալու սկզբունքներին.
- Էական բացասական ազդեցություն է ունենում քաղաքացիների և իրավաբանական անձանց խախտված իրավունքների պաշտպանության վրա.
- Ըստ էության բացառում է անվճար (pro bono) իրավաբանական օգնության տրամադրման հնարավորությունը փաստաբանական կազմակերպությունների կողմից.

- շեշտակի ավելացնում է փաստաբանական ծառայությունների արժեքը՝ սահմանափակելով իրավաբանական օգնության հասանելիությունը, մատչելիությունը և դատական պաշտպանության իրացման հնարավորությունը.

- չնախատեսված էական ֆինանսական բեռ է առաջացնում անհատ փաստաբանների և փաստաբանական կազմակերպությունների համար, որոնք պետք է շարունակեն իրավաբանական օգնություն տրամադրել արդեն իսկ կնքված պայմանագրերի շրջանակներում՝ վճարելով 6-8 անգամ ավելի բարձր հարկ, քան սահմանված է եղել պայմանագրերի կնքման պահին գործող օրենսդրությամբ.

- հանգեցնում է խտրական պայմանների ֆիզիկական անձ քաղաքացիների համար, քանի որ ի տարբերություն ԱԱՀ վճարող առևտրային կազմակերպությունների, քաղաքացիներին մատուցվող փաստաբանական ծառայությունների արժեքը 20 տոկոսով բարձր է.

- լրացուցիչ ծանրաբեռնում է փաստաբանների աշխատանքը, ինչպես նաև լրացուցիչ ծախսերի առիթ դառնում՝ ավելի բարձրարժեք հաշվապահական ծառայություններից օգտվելու պարտադիր անհրաժեշտություն ստեղծելով.

- սահմանափակում է փաստաբանական ինստիտուտի զարգացման հնարավորությունը՝ ակնհայտ դժվարացնելով նորաստեղծ փաստաբանական գրասենյակների կազմավորումը՝ պայմանավորված ծանր հարկային բեռով.

- խտրական պայմաններ է ստեղծում փաստաբանական գործունեություն իրականացնողների համար ի տարբերություն տնտեսության այլ բնագավառների, որտեղ կիրառվում են հարկային արտոնյալ պայմաններ.

- խտրական է փաստաբանների և փաստաբանի արտոնագիր չունեցող իրավաբանների կողմից մատուցվող միևնույն՝ իրավաբանական (ոչ փաստաբանական) ծառայությունների հարկման առումով, քանի որ միևնույն գործունեությունը (նույն հարկման օբյեկտը) փաստաբանների մասով հարկվում է բազմապատիկ անգամ ավելի (հարկում ըստ սուբյեկտի, այլ ոչ թե օբյեկտի)՝ տանելով նաև պետության կողմից անհավասար մրցակցային պայմանների՝ ի վնաս փաստաբանների.

- խտրական մոտեցում է ստեղծում պետության կողմից Սահմանադրությամբ պաշտպանվող իրավաբանական օգնության իրավունքի և կրթության և առողջության

պահպանման իրավունքների միջև: Վերջիններիս տրամադրելով ԱԱՀ-ից ազատված լինելու հնարավորություն, պետությունը ոչ միայն խտրական վերաբերմունք է դրսևորում Սահմանադրությամբ ամրագրված իրավաբանական օգնության իրավունքի նկատմամբ, այլև՝ արհեստականորեն սահմանափակում է Սահմանադրությամբ երաշխավորված՝ անձի իրավաբանական օգնության իրավունքից օգտվելը.

2. ***ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է ԵՎ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ՀԱՄԱՐՈՒՄ*** իրավասու պետական մարմինների կողմից իրականացվող մարդու իրավունքների պաշտպանության համակարգը խաթարող և խտրական հարկային քաղաքականությունը փաստաբանական համայնքի նկատմամբ.

3. ***ԿՈՉ Է ԱՆՈՒՄ*** իրավասու պետական մարմիններին անհապաղ նախաձեռնել և իրականացնել խնդրահարույց օրենսդրական կարգավորումների փոփոխություններ՝ փաստաբանական գործունեությունը, անվճար (անհատույց) և կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրումն ազատելով ավելացված արժեքի հարկից:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի ընդհանուր ժողով